

# Դ Ե Պ Ի Ա Ն Ի

Ճանապարհն այսուհետև աւելի տանելի է, թէև գրաւիչ ոչինչ չունի. լերկ, անհամբոյր բլուրներ են չորս կողմներս և Ախուրեանն է մեր մշտական ուղեկիցը, որ հոսում է միշտ անդունզների միջից, միշտ գալարուն ու անձայն. Դաւադրական մի բան կայ նրա ժայռուտ ափերի խորութեան, նրա յարատև լուսվեան մէջ.

Ես երեակայում եմ ձմերային մի գիշեր, մի բուք-բորան գիշեր, երբ փոթորիկը ձիւնը լցնում է բոլոր խոր ու ձորերը, ծածկում է բոլոր նշաններն ու շատիզները, Ախուրեանի անդունզը հեռուից դառնում է մի դաւաճան հարթութիւն, ուր անշշուկ գետը գարան մտած գազանի պէս սպասում է մոլորուած ճամբորդին:

Ոյս մոռացուած ու կիսավայրենի երկրում, ուր տէրը միայն բնութիւնն է, և մարդը ոչինչ չի անում կեանքի տանելի պայմաններ ստեղծելու համար, ուր ճանապարհները քամիւներն ու հեղեղներն են շինում և ոչ մարդկային ձեռքը, անդնդախոր Ախուրեանը մի ուղեկից է, որից միշտ կարելի է վախենալ:

Փոքրիկ պտոյտ ենք գործում, դէպի ձորն ենք իշխում, և զօշավանքը մեր առաջն է իր շէն և աւեր եկեղեցիներով, Դիմում ենք դէպի այն հին տաճարը, որ այժմ գիւղի աղօթատունն է: Միաբանական մի անցած կեանք այստեղ դեռ թողել է իր հետքերը: Բակի շուրջը տակաւին շարուած մնում են վարդապետական խցերի մի ամբողջ շարք, որոնք բոլորն էլ դատարկ են:

Բուն եկեղեցին մտնելու համար պէտք է անցնել մի կիսախաւար նախագաւթից, որ շինուած է արաբական ոճով՝ մանաւանդ նրա կեղրոնի վրայ կախուած բազմանկիւնի կոնաձև գմբէթը ներսից ողկուզաձև քանդակներով զարդար-

\*.) ՏԵ՛Ս «Մուլճ» 1.

ուած։ Այստեղ սիւներ կան, հաստաբեսաւ ու բարձր, որոնց նմանները ես տեսել եմ միայն Հռոմի Փորումում։ Եւ այդ սիւները միակտուր քարից են։ գեղեցիկ չեն նրանք, այլ ուժեղ և գոռոզ։ Կողոսներ են սրանք և կարծես յաւիտենականութեան համար կերտուած, բայց ժամանակը աւելի հզօր է հանդիսացել և ճախակողմեան սիւնը արդէն ճաքել է վերից վար, Բարերախտարար ճարուել է մի խնամուռ ձեռք որ երկաթեայ հաստ գոտիով նրա մէջքը պրկել է և այս հետաքրքիր շէնքը վերջնական աւերածից աղատել։

Դրանից բացի՝ Ղօշավանքի եկեղեցու բակում միաբանական խցերի յետեւում ծակծկուած ու թափթփուած կտուրների տակ կայ մի հրաշալիք, արաբական ու հայկական արուեստի մի գրաւիչ ծնունդ։

Ներս ենք մտնում։ Տամուկ մթնոլորտը լցուած է փթած դարմանի և խոտի անախորժ հոտով։ Երեք քառակուսի դահլիճներ յաջորդում են իրար. նրանցից առաջինը վերածուած է յարդանոցի. խոտի մի ահազին դէզ բռնում է նրա մեծ մասը. տեսնելու ըէլչ բան կայ, շտապով անցնում ենք նայելու միւս երկու դահլիճները. ամենից մեծը և ուշագրաւը վերջինն է։ Չորս կեդրոնական և տասներկու միջնապատեայ սիւների վրայ կախուած են տասն կամարներ՝ կազմելով երեք կարգ սինազարդ սրահներ։ Առաստաղը հէնց կեդրոնում կոնաձեզ գողանում է, աստիճանաբար նեղանալով դէպի վեր։ Այստեղ էլ տերևաձեւ քանդակներ վարպետորէն ու ճաշակով իրար խճողուած, մի սիրուն փունջ են կազմում վերնում։ Ոճը արարական է հայկականին խառն։ Կամարները կեդրոնում նեղանուուն էլիպսի ձևով։ Սիւները բարակ են ութանկիւնի նուրբ գծերով, միայն կեդրոնականներն են կոլոր։ Զնայելով որ շէնքը բարձր չէ, կամարների և յատակի մէջ տարածութիւնը փոքր է, այնուամենայնիւ ամբողջի տպաւորութիւնը չափազանց թեթև է ու տեսքը խիստ գրաւիչ։ Զարմանալի է, թէ այս ծայրայեղ անտէրութեան ու լքման մէջ ինչպէս գեռ կանգուն է մնացել այս հրաշակերտը։ Կտուրի մի չնչին մասն է միայն թափուել, մնացածն ամբողջ է, չնայելով որ ոչնչով պաշտպանուած չէ, անձրեների և ձեան առաջ։ Ոչ մի խնամք, ոչ մի ուշագրութիւն. միայն երբեմն այցելուներն են գալիս, նայում, փոշոտ, խոնաւ պատերի ու սիների վրայ անունները գրում ու անցնում, թողնելով որ ժամանակը կատարեալ դարձնի աւերածի գործը։

Զայրոյթի, ցաւի և մանաւանդ ամօթի մի բուսն զգացմունք համակում է մարդուն և ստիպում շուտով դուրս փախ-

չել չտեսնելու համար առաջին սրահում կուտուած խոտի ահագին դէղը, որ տգիտութիւնը, յանցագործ ու բութ յիմարութիւնը տնկել են այստեղ՝ որպէս ամօթալի խորհրդանշան մեր հայրենի յիշատակարանի արտասուելի կացութեան Դժուար էր աւելի ծանր կերպով վիրաւորել մեր նուիրական անցեալը, աւելի բիրտ կերպով անարգել հայրենի արուեստը, ցեղական հանճարը. Վերից կախուած են դեռ ստալակիտի ձևով հոյակապ քանդակները և նրանցից վար այս գարշահոտ դէզն է: Այս հրէշաւոր հակասութիւնը, այս այլանդակ աններդաշնակութիւնը հոգի է ցաւեցնում:

Ի՞նչ է այս սակայն, պալմտ, կաթողիկոսարմն, արքայական ապարամնը... մի գիտէ: Մեր երէկն ու այսօրը մինչև այժմ անկարելի եղաւ կապել իրար, յամենայն դէպս անկասկած է, որ այս սիրուն կամարների տակ, այս գեղեցիկ քանդակներից ներքեւ, մի օր, զլուխները են խորել, որոնց առաջ պալատները յարդանոցի վերածողի սերունդը մի ոչնչութիւն է: Այստեղ գուցէ մի ամբողջ երկրի բարձրագոյն միտքն է գործել, նրա հասարակական, քաղաքական և հոգմոր կեանքի առանցքն է գարձել: Մըրատաշ քարերն ու կամարները համր են, կեանքը մեռել է վաղուց և այն օրուանից գեղարուեստը ամեն օր պղծում, անարգում է և մեռնում՝ մաս-մաս Եւ այս ցուրտ, գերեզմանային ամայութեան մէջ բազմել է այս խոտի դէղը, նոյնքան թանձր, ու նոյնքան բորբոսնած, որքան նրա շուրջն ապրող մարդու միտքը:

Վհատեցուցիչ է մտածել, որ մի հատիկ այդպիսի շէնքը բաւական է մի ամբողջ էպոխայի արուեստը փրկելու համար և մենք այդպէս արհամարհում ենք նրան: Գանձեր ունենք՝ և աղքատ ենք, գեղարուեստ ունենք՝ և բիրտ ենք ճաշակով: Այս վանքում, ասում են վարդապետ կայ. մենք չտեսանք նրան. Ի՞նչ է անում այդ սևագլուխը. նրա գիտութեամբ է պալատը յարդանոցի վերածուել անշուշտ: Ել ինչնու համար է նա այստեղ. աւերակների վրայ առանց նրան էլ բուերը կարող են վիւա անել: Մայր Աթոռը՝ հայրենի յիշատակարանները իր պաշտօնեաների խնամքին յանձնելիս, նրանց վրայ կրկնակի պարուք պիտի դնի, հոկել, որ եղածը անաղարտ ու մաքուր մնայ և հնար եղածին չափ նորոգել աւերուածը: Եթէ աղգային կրեսուները անկարող են ըմբռնել՝ թէ ի՞նչ է նշանակում մի ժողովուրդի բարոյական մեծութեան համար սեփական գեղարուեստը, և չեն հոգում որ հայրենի յիշատակարանները կանգուն մնան, իւրաքանչիւր. վասնահայր վարդապետ այցելութիւնների համար իրաւունք ունի փոքրիկ հարկ սահմանել հոգեոր

կեղրոնական իշխանութեան թոյլտութեամբ և վերահսկողութեամբ։ Այդ գումարը պէտք է գործադրուի յիշատակարանների պահպանութեան, հսարաւոր վերանորոգութեան վրայ։ Սա մի սովորութիւն է, որ գործադրուում է համարեա բոլոր բազա-քափիրթ երկրներում։ Խտալիայում իւրաքանչիւր միւզէ կամ հետաքրքիր աւերակ այցելելիս առնուազն վերցնում են 1—2 ֆրանկ։ Հոռոմում ֆորումի փորուածքները տեսնելու, Նեապո-լում Պոմպէի աւերակներն այցելելու համար երկուական ֆրանկ է պահանջուում։ Մինչև իսկ Վեզուվի հրարուխը տեսնելու հա-մար չորս ֆրանկ հարկ է սահմանուած։

Յիշում եմ Շիլեօնի դղեակը Շվեյցարիայում, Լեման լճի ափին։ Իւրաքանչիւր ճանապարհորդ Շվեյցարիայով անցնելիս պարտք է համարում այցելել Բոնիվարի բանտը, վճարելով մուտքի համար մի ֆրանկ, բացի այլ ծախսերը որ նա ստի-պուած է անել գնելով դղեակի մինիստուրան Ներկայացնող փոքրիկ զարդեր, նկարներ, կարտեր ևայլն։ Մի ամբողջ յանձ-նաժողով կայ, որ հսկում է այդ դղեակի բարեզարդութեան վրայ և մի ճարտարապետ անընդհատ կատարում է հարկ եղած նորոգութիւնները։ Ամբողջ Շվեյցարիան է հպարտ իր Շիլեօ-նով. զարմանում են, երբ ճանապարհորդը ուշանում է այցելել այդ դղեակը. և սակայն ի՞նչ է այն՝ համեմատելով մեր Ղոշա-վանքի այս սքանչելի ապարանքի հետ, որ պահապան վար-դապետը անհրաժեշտ է գտել յարդանոցի վերածել։

Ի՞նչո՞ւ չիշել այստեղ և մեր պատմական, մեր հին ազգա-յին ցաւը. «օտարի ճրագ» ասացուածքը հայը հէնց իր համար է ստեղծել, մենք սովոր ենք արհամարհել մեր սեփականը, մեր ունեցածը։ Մեր փառքն ու մեծութիւնը, մեր գեղարուեստն ու գիտութիւնը, մեր գրականութիւնն ու մեր պօէզիան մենք միշտ արհամարհել ենք և գերադասել օտարինը. «օտարի ճրագներ ենք», առատածեն, մեծահոգի՝ օտարի համար, օտարի տներում, գծում ենք քարասիրտ ու քիրտ, երբ պէտք է հայրենի երկրի բարօրութեան և յառաջադիմութեան համար զնեեր յանձն առ-նել։ Ես հաւատացած եմ, որ Շիլեօնի ողորմելի, անհետաքը-քիր դղեակը տեսնելու համար տամնեակ ֆրանկներ ծախսող հայը կոպէկները կը խնայի մի հայրենի աւերակ այցելելու կամ նրա վերանորոգութեանն օժանդակելու համար։

Օտարի ճրագներ ենք...

Գիւղից վար, ձորակի մէջ, Ախուրեանի ափին դարձեալ եկեղեցիներ. այնտեղ է նաև Աշոտ Ողորմածի դամբարանը։ Վար ենք իջնում մի կեղտոտ արահետով. ամայի ձոր է. ոչ մի ծառ անգամ. ջրի ափերը լերկ են, Վեր-վար մեծ

ու փոքր քարեր են միայն։ Ձորի լանջի վրայ կանդնած է մի մոլորուած՝ գժգոհ գոմչը և իր լայն կոկորդի բոլոր ուժով անքում է ու մոնչում։ Նրա անախորժ ձայնը տարածում է ձորի և աւերակների վրայ գոռ արձագանքներով և էլ աւելի անհաճոյ դարձնում ընդհանուր պատկերը, Եկեղեցիները, որոնք ցցուած են մի մերկ թմրի վրայ, հեռուից միայն շէս են թւում։ մօտիկից նրանց աւերածը անդարձ է, կտուրները թափուած, պատերը կիսով չափ խորտակուած։ Նրանց շրջապատը անասունների կայան է և տարիների աղբ է դիզուած։ Ահա այստեղ է և Աշոտ Ողորմածի յաւետենական հանգստարանը, մի անշուրք, աւերակ դամրարան։ Ո՛չ մի զարդ, ոչ մի քանզակ, բացի մի քանի անշորք հայ տառերից, որոնք կազմում են մեծ թագաւորի անունը։ Արգայական ոչինչ չի մնացել այս դամրարանի վրայ։ Ողորմած թագաւորի նուրբական շիրիմը նոյնպէս ամենաանողորմ անարգանքի է ենթարկուած։

Հեռանում ենք, վերստին բարձրանում ձորն ի վեր գիւղում մի պատյա կատարելու համար։ Հայ գիւղը Շիրակում։ Դա մի կատարեալ անախրօնիցմ է, մի կակեցուցիչ երեսից։ Ես շատ եմ տեսել հայ գիւղեր, բայց Շիրակինը... Նա կարծես քարացել է դարերից ի վեր ճնշող խաւարի ծանրութեան տակ։ Տները թէն էլ գետնափոր չեն, ինչպէս Թսենոփոնի տեսածները, բայց շատ էլ չեն տարբերուում նրանցից։ Բոլորն էլ ճխլուած տեսք ունին և շատ քիչ են բարձրանում գետնի երեսից։ Եւ այս աղբը... ովկ է այսքան աղբ հաւաքել այս գիւղում։ Թւում է թէ առանձին աշխատանք է գործ դրուել փողոցները, տների շուրջը, պատերը, ցածրիկ կտուրները որքան կարելի է աւելի աղտեղելու համար։ Անձրկը այդ աղբից կը պատրաստի մի զգուելի, բազմագոյն և գարշահոտ շագախ։ իսկ այժմ չորային է և անասունների արտաթորութիւնները, Փըթած յարդի մնացորդը, փոշի, մոխիր, խիճ խառնուած իրար, թանձր շերտով ծածկել են ամեն ինչ։ Քայլում ես և կօշիկներով ակօս ես բաց անում քո յետկից։

Տները մեծ մասամբ բակեր չունին։ Նրանց դոները բացւում են հէնց այս աղբի, այս գարշանքի ծովի վրայ։ թեթև քամին բաւական է, որ փողոցներից այս ապականութիւնը ներս մտնի, ծածկի տան յատակը, թափուի ամանների մէջ, անկողիների և զգեստների վրայ, կերակրի և ջրի հետ խառնուի։ Դարեր շարունակ այսպէս է և այս ժողովուրդը վերջիներջի աղբի ու կեղտի հասկացողութիւնը կորցըել է։ Փողոցները որբելու մասին խօսք չի կարող լինել, տղամարդիկ կա-

նայք, երեխաներ սիրով կը նստեն աղբակոյտների վրայ, կը շնչեն գարշահու գոլորշիները, կը ծձեն միջատներով լի փոշին և երբեք չեն զգայ, որ դա կատարեալ անասնական կեանք է:

Գիւղը գեղեցիկ դիրք ունի. նա զետեղուած է ձորակի գլխին, որից ներքեւ հոսում է Ախուրեանը. գեղասիրութեան ամենատարական պահանջի կատարեալ բացակայութեան շնորհիւ գիւղացիք չեն օգտուել նաև այդ բնական գիրքից, մի փոքրիկ տեսարան, մի փոքր լաւ ող ունենալու. Անգամ ձորակի գլխին ապրող գիւղացին իր խրճիթը շինել է աղտոտ փողոցի վրայ, իսկ ձորին նայող գետինը յատկացրել է անասունների գոմին ու աղբին. Ե՛ւ մաքրութիւն, և' առողջապահութիւն, և' ճաշակ ամեն ինչ այստեղ զո՞ն է բերած անասուններին. գիւղերի տէրերը նրանք են, այս մոնչացող գոմէշները, այս եզներն ու կուվերը. փողոցերը նրանց համար են, տները նրանց համար. Այդ չորքոտանիները, որոնք տէրեր են գիւղացու ճակատագրին, իշխում են գիւղերում և մարդն ստիպուած է սողալ նրանց յետեկից աղբի և գարշահոտութեան մէջ մի կերպ ապրելու համար:

Մի տնից ծուխ է դուրս գալիս, և դրան առաջ կանայք են երկում. Խնդրում ենք մի վայրկենով ներս ընդունել մեզ. Հայը հիւրասէր է ինչ պայմաններում և վնի նա. Տանտիկինը մի կեղտոտ ու գոզուած պառաւ, ներս է հրաւիրում մեզ: Ինչպէս երկու հազար տարի առաջ, նոյնպէս և այժմ, մարդիկ և անասունները մի հատիկ դուռ ունեն. մուտքից դէպի աջ, տան միջից բացւում է գոմի դուռը. մի ահազին գոմ և մի լաւ սաքու: «Այստեղ ենք պառկում» ասում է պառաւը ցոյց տալով սաքուն: «Ձմեռը շատ լաւ է այստեղ» աւելացնում է, նկատելով մեր զարմանքը:

Իսկական տունը գիւղացու համար թոնրատունը չէ, որ ծառայում է կերակուրներ եփելու, հաց թխելու համար, այլ սպօնն, ընակարանի այդ ամենայարգի մասը, ընդունարանը, հանգստութեան հանելի անկինը: Եւ սաքուն նոյնն է, ինչպէս սրանից երկու հազար տարի առաջ. փոփոխութիւնը որ տեղի է ունեցել այդքան դարերի ընթացքում, դա սաքուի լուսաւորութեան մէջ է. մի ժամանակ վառում էին ձիթէ ճրագ, իսկ այժմ փոքրիկ, մրու լամպ, որ ծխում է անվերջ: Եւ սակայն, գոմն անասուններին է. այստեղ միայն մի չնչին անկիւն ունի գրաւած մարդը իր և իր հիւրերի համար. Անասունների շնորհիւ; կամ ինչպէս գիւղացիք են ասում նրանց «սատաղայով» են ապրում գիւղերում: Ահա թէ ինչո՞ւ են տէր անասունները: Մինչև իսկ ցրտերի գէմ մարդը առանց անասունի չի կարող

պաշտպանուել. երկար ու ցուրտ ձմեռները նա կծկում է նրա շնչի տակ, նրա կողքին և գոմի գարշահոտութիւնը վերջ ի վերջոյ դադարել է նրա համար անհաճոյ լինելուց. Չորս հինգ ամիս անսառնների մթնոլորտում, նրանց արտաթորութիւնների վրայ աօլրողը չի կարող տեսնել և մանաւանդ զգալ փողոցների կեղտոտութիւնները:

Նախասենեակի տեղ ծառայող մի տալան կայ, որ բաժանում է իրարից գոմն ու թոնրատունը. թէ մէկը և թէ միւսը մտնելու համար՝ այստեղից պէտք է անցնել Անսառնները և մարդիկ հաւասար իրաւունք ունեն այստեղ:

Ունեոր տուն է: Պառաւ տանտիկինը հպարտութեամբ ցոյց է տալիս մեզ ալրի տախտակէ ամբարը (փետուկ), առաստաղից կախուած ինոցին, երեք օրօրոց և... հեշտաեռը: «Ճղերքը իրի կունները չայ կը խմնն, երբ աշխատանքից տուն դառնան» ասում է նա ինքնարաւական կերպով: Փորձում եմ առաջ անցնել դէպի թոնրատունը, որի դուռը բաց է. բայց այդ անկարելի է դառնում. ներսը մի կատարեալ դժոխք է: Թոնիրը վառում է, թանձր ծուխը լցրել է խրճիթը և դժուարութեամբ դուրս է նետում փոքրիկ հերդիկից: Միխ շերտի տակ, գետնի երեսին, թոնրին մօտ հազիւ հազ երեսում են մի բանի կանայք ու երեխաներ. վերջինները պառակի թոռներն են, որոնք շըրջապատել են թոնիրը և ծիր մէջ լեռդուելով, աչքերից արցունք քամելով նայում են մի ինչ որ կճուճի երեխաներից մէկը սաստիկ լալիս է, մի բան է պահանջում մօրից. վերջինս զայրանում է, ճչում, անիծում. փոքրիկը չի լսում. մայրը վրայ է պրձնում և նրա թիկունքին մէկ երկու հարուածներ իջնում բառնցքով. լացողի ձայնը բարձրանում է աւելի զիւ կատաղած մայրը այս անգամ խլում է աւելը հակառակ կողմից բանած՝ սպառնալի կերպով նետում է դէպի մանուկը՝ «մկայ կը թմմցընեմ քեզի» ճչում է նա. երեխան լաւ է հասկանում երեսի «թմմցընելու» խորհուրդը և որովհետեւ բնացանկութիւն չունի «թմմուելու», դուրս է փախչում: Մեր առջեկից անցնում է նա շեշտակի, գզզուած ու սև, որպէս մի ճշացող աղքակոյտ. նրան հետեւում է կատաղած մայրը, որ որոշել է անպատճառ «թմմցընելը»: նրան բռնում է փողոցում և մանուկը աղիողորմ ճչում է աւելի կոթի հարուածների տակ: Ներսում շարունակում է վառուել թոնիրը. ծուխը բարձրանում է, հա բարձրանում՝ լցնելով խրճիթը, և կրակի շուրջը դառնում են մի քանի դէմքեր՝ աչքերը տրորելով, արցունքը սրբելով: Ի՞նչ է կատարում. դժուար է հասկանալ, բայց անշուշտ մի բան կատարում է: Գիւղն այսպէս է ապրում...

**Ծուխ, մուր, անասուն, աղբ, արցունք, ծեծ, ճիչ, ահա  
այդ կեանքը։ Սև, այլանդակ կեանք, մի մութ գոյութիւն, որ  
սողում է այս խաւարի մէջ, անգիտակից ու թշուառ, չարքաշ  
ու կարօտ. սողում է կեղտի ու մուրի մէջ և ապա անցնում է:  
Ասես բնաւ եկած շվնէք։**

—**Ես երեխան հիւանդ է, ի՞նչ անենք, տաքոց-դողոց ունի.  
Նայում եմ, խօսողը պառաւ տանտիկինն է, նա ցոյց է տա-  
լիս մի փոքրիկ հիւանդ երեխայ, որ վառում է շերժի մէջ և որ  
չգիտեմ նրտեղից յայտնուեց։ Ամեն մի լաւ հազնուած մարդ՝  
գիւղում որոշ չափով բժիշկ է, և պառաւը հարկաւոր է համա-  
րում դիմել մեր օգնութեանը իր թոռնիկի բժշկութեան համար։**

—**Քինա քինա տուէք, պատասխանում եմ։**

—**Քինաքինան ի՞նչ է, մրտեղից բերենք։**

**Վհատեցուցիչ ու անյոյս խեղճութիւն։ Ի՞նչ պատաս-  
խանեմ. նայում եմ ողորմելի պառախն լուսութեամբ, էլ ինչ  
ասելս չգիտեմ, անտէր ու խաւար գիւղը ապրում է հէնց  
այնպէս, երկնքի հովանու տակ, ամեն մի հիւանդութիւն այս-  
տեղ մի ճակատագիր է, ամեն մի փոքրիկ աղէտ՝ անյոյս թշ-  
շուառութիւն։ Խաւարի ժայռն է առաջդ, անխորսակելի ու ա-  
հագին, Բայց պառաւն սպասում է. նա իր մարած աչքերը չի  
հեռացնում իմ շրթունքներից. ախր թոռն է հիւանդ, այս սի-  
րուն թոռնիկը. քաղքի մարդիկ ենք, մի բան կիմանանք, նա  
ճար է ուզում։**

—**Նմանի, քինաքինան քաղքից կը բերեն, քաղքից։**

—**Հոռ, քաղաքը հեռու ա, լինում է պատասխանը։**

**Հեռու է, ամեն ինչ հեռու այս դժբախտ գիւղի համար.  
Ա' գեղ, Ա' բժիշկ, և լոյս, Ա' բախտ. մօտը միայն ցան է ու  
գերեզմանը. այս երկուսն էլ տանում են անտրտունչ։**

**Կառք ենք նստում, պատրաստում ենք հեռանալ և ահա  
վազէվազ համնում է մեր յետեկից նոյն պառաւը. նա էլի ասե-  
լիք ունի. այժմ ինդրում է ասել, թէ ի՞նչպէս բժշկել «փորո-  
ղակը» (կօկիւշը). այս անգամ էլ պատասխան չունենք, կառքը  
ունանում է և պառաւը շարունակում է նայել մեր յետեկից ան-  
յոյս ու խեղճ։ Քաղաքի մարդիկ էին, ուկտուն» մարդիկ, եկան  
տեսան և ոչինչ չասացին նրան, դարդին ճար չարին։ Ահա նա  
հնազանդ տուն կը դառնայ, ուր ծուխը բարձրանում է պալան  
պալան, փոքրիկ երեխան տենդում է, մի ուրիշը լաց է լինում  
և ցաւի մէջ մոլորած, համբերութիւնը հատած մայրը աւելով  
«թմցնում» է միւսին։**

**Ի՞նչն է այս ժողովուրդն այսպէս անճարակ, այսպէս մո-  
ռացուած, մտածում եմ ես, երբ անցնում ենք գարշահոտ ան-**

տանելի փողոցներով։ Ե՞րբ մեռաւ գեղեցկի, բարձր հոգեսոր և  
մտաւոր պահանջների ազնուացնող զգացմունքը այս վայրե-  
բում, ուր անշէն պալատներն ու եկեղեցիները կողոպտուած  
ու պղծուած՝ գեռ խօսում են վսեմ արուեստից, վկայում են  
մի բարձր քաղաքակրթութիւն։ Ինչպէս է պատահում, որ այս  
գոռող յիշատակարաններում, այս սիւնազարդ դահլիճներում, այս  
աւերակ կամարների տակ ապրող մեծ ողին ոչ մի բարձր ներ-  
շնչումով չի յուզում այս խաւար և խեղճ սրտերը, չի աղմկում  
սրանց հոգին կրազական իղձերով։ Ի՞նչու այս հրէշաւոր ահա-  
ներդաշնակութիւնը մեռելների գեղեցկութեան և կենդանի  
մարդկանց այս մահացու դալկութեան մէջ։ Հոգեոր կենդանի իր  
բոլոր վսեմ, բարձր արտայայտութիւններով ինչնու է սպասուած  
այստեղ։ Հաղար ու մի խեղդող հարցեր, որոնց պատասխանը  
ծածկուած է հին դարերի մշուշի մէջ և որոնք դիւական պա-  
րով անցնում են մարդու աշքի առաջից։ Մտածիր ինչ ուզում  
ես, խորհիր, որչափ կամինաս, բայց իրականութիւնը՝ անյոյս  
ու խեղճ, այստեղ է առաջդ ցցուած։

Ահա գիւղացին փորում է տնքալով։ Նա ցորենի հոր է  
պատրաստում։ Շիրակի հինանուրց ամբարները։ Ահա մի ու-  
րիշը դաշտից սայլով ցորեն է կրում եւ յետոյ այս կալերը...  
մանուկները քշում են կամը, կանայք ցորեն են մաղում, տղա-  
մարդը երան է անում, թեղն է քամու տալիս՝ ցորենն ու յարդը  
իրարից բաժնելով։ Աշուն է, կալ ու կուտի ժամանակ։ գիւղն  
աշխատում է հեիհե, երկար ձմեռուայ համար հաց է պատ-  
րաստում։

Ապշեցուցիչ է ցամաք հացի այն բանակութիւնը, որ մի  
գիւղացի կարող է ուտել։ Աստամները գործում են անվերջ, ծը-  
նօտը յոգնում է բարձր ու ցածր անելուց, բայց անիծած ստա-  
մորսը չի լցուում։ Նա անծայր է, նա անդունդ է։ Մի հատ լա-  
ւաշը անուշահոտ ու կակուլ, փաթաթւում է հին մագաղաթի  
ձևով, գիւղացին բռնում է ձեռքին այն, ինչպէս մահակ և ան-  
միջապէն ոչնչացնում։ Եւ քանի այդպիսին նա կարող է կուլ  
տալ, երբ «թացան» չկայ, «տարեկեր» չկայ, մի փոքր մսաջուր  
չկայ, «փրթոց» պատրաստելու համար։ Եւ երբ մի ժողովուրդ  
դարեր շարունակ, շնորհիւ երկրի բնութեան միայն ցամաք հաց  
է ծածում, զարմանալի չէ, որ նրա ստամոքսը դանում է «Շա-  
րայի որկորը»։ Բարեբերութեամբ հոչակուած Շիրակի դաշտը  
հացից գուրս ոչինչ չի տալիս, գոնէ այն էլ առատ լինէր, բայց  
հողը յոգնել է դարերի մշակութիւնից, հողը պառաւել է, մինչ-  
դեռ բնակիչների ստամոքսը շարունակում է մնալ «Շարայի  
որկոր»։ Շիրակեցին, գիտէ այդ։ Նա գիտէ, որ իր փոքրի և իր

ամբարների մէջ ներդաշնակութիւնը վաղուց խախտուել է, ուստի նա անհանգիստ է, դողում է իր հացի համար, ցամաք հացի. փոյթ չէ, որ տունը համարեա գետնափոր է, աղբի մէջ կորած, որ փողոցները անտանելի են, ճանապարհներն անանցանելի. փոյթ չէ, որ նա զրկուած է քաղաքակիրթ կեանքի ամենատարրական յարմարութիւններից, միայն թէ հաց լինի, հաց. Փորի ահաւոր հոգսը բռնել է նրա ամբողջ էութիւնը. բոլոր միւս, աւելի բարձր, աւելի ազնիւ պահանջները չնշուել են այս մի հատիկ հրամայող պահանջի առաջ: Զուլում է այն տարին, երբ սակաւ է հացը, երբ հորերը չեն, երբ ալրի ամբարը կիսատ է, թոնիրն ամեն օր չի վառւում, թաժայ հացի հօտը տունը չի լցնում: Հաց, հաց... այս խեղճ ժողովուրդն ապրում է միայն հացով, զարմանալի է միթէ, որ հոգնոր աւելի բարձր պահանջները խեղճում կամ բնաւ չեն զարթնում ստամոքսի հրամայող հոգսի առաջ:

Աւ. Ահարոննեան  
(Կը շարունակուե)

\* \* \*

Երեկոյեան ծաղկոտ սարից  
Հովիւն հօտը տուն կը բերէ.  
Յոդնած հօտը մթին սարից  
Քնքոնց եարիս քուն կը բերէ:

Եսօր եարս շատ է խաղցել  
Արեգակի շողերի հետ.  
Արեկի պէս շատ է խաղցել  
Շնդ-մատներով իմ սրտի հետ:

Շնդ-մատներով, վարդ-մատներով  
Իմ սրտի հետ շատ է խաղցել.  
Հիմա յոգնել, եղնիկի պէս,  
Գըկիս միջին քուն է մտել:

Յոգնած հօտը սար ու քարից  
Սիրուն եարիս քուն կը բերէ.  
Աղբիւրների, ծաղիկների  
Երազներով քուն կը բերէ:

Աւ. Խնահակեան